

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ*

Անի Խաչատրյան

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաժան ճակատագիր էր վիճակված արևմտահայությանը: Երիտրութքական կարավարության կիրառած քաղաքականության հետևանքով արևմտահայությունը կանգնեց ոչնչացման վտանգի առջև: Ակսվեցին զանգվածային տեղահանություններուն ու կոտորածներով Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում և գյուղերում:

Անչափ ցավալի է, երբ մարդկության դեմ երևել իրականացված ամենազարհութելի ու մասսայական ոճրագործությունը՝ հայոց ցեղասպանությունը, ամբողջ աշխարհում դեռևս լիովին ճանաչում չի գտել: Սակայն մեր ժողովորի ապրած անանցամելի ողբերգությունը անշուշտ վկայված է ականատեսների հիշողություններում, պատմագիտական ուսումնասիրություններում ու գեղարվեստական պատումներում: Այս առումով առանձնահատուկ կարևորություն է ծեռք բերում ցեղասպանությունը համայն աշխարհին ներկայացնելու և դատապարտելու նպատակադրումով գրված < Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը, հեղինակի բնորոշմամբ՝ «Ողբածումնէ դատաստանամատյանը»:

<Հայաստանի ամեն մի լեռ, մի քարացած հայ է անմեռ» [1], - գրում է Երիտասարդ բանաստեղծն իր մեծակտուավ պոեմում: Բանաստեղծն այս երկի վրա աշխատել է շուրջ քառասուն տարի, մինչև իր կյանքի գրեթե վերջը: Խորհրդային տարիներին հնարավոր չէր իրականացնել գրքի ամբողջական իրատարակությունը, ուստի առաջին անգամ լուս է ընծայվել Բեյրութում 1965թ: Պոեմի հրատարակությունն ապահովել է Բեյրութի «Սևան» հրատարակչական տունը: Գիրքը բացվում է հետևյալ գնահատականով. «Հովհաննես Շիրազի այս քերթուածավեպը նվիրված է ապրիյան եղեռնին: Այս քերթուածավեպը փոթորիկ մըն է, ապրիյան փոթորիկ մը, որ կերգե հայոց տառապանքը քաշելով, մղկտալով, ստավելով և ճառագայթելով»:[2]

Այս ճշմարիտ գնահատականին հաջորդում է զարմանքն այն պատճառով, թե «ինչ չու Հայաստանին մեջ չէ հրատարակված այս գործը և անոր ծեռագիրը ընկած է Ռժերան (Ալիք օրաթերթ), որն էլ կարտասովվի այստեղ... Համենայնդեպս հայ ընթերցողներուն համար «Հայոց Դանթեականն» ընթերցումը պիտի ըլլա քիչ անգամ պատահող վայելը մը»:[3]

Զարմանալու ոչինչ չկա: «Հայոց դանթեականի» հանդեպ խորհրդային Հայաստանում ժխտողական անտարբերությունը լենինյան զաղակարախոսության հետևանք էր, մի զաղակարախոսություն, որը բխում էր բոլշևիկյան թուրքամետության թունավոր կեղուաջրից: Անա թե ինչու պոեմը Երևանում տպագրվեց մեծ բանաստեղծի մահվանց վեց տարի հետո՝ 1990թ.: Այն կաղապար, չափ ու ծև չիանդուրժող մի ստեղծագործություն է, ուր համածովված են իրականն ու տեսլիայինը: Մեր գրողներից շատերն են անդրադարձել եղեռնի թեմային, սակայն Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» առանձնանում է ոչ միայն ծավալով, այլև գեղարվեստական ինքնատիպությամբ: Այն մեծ

* Հորվածն ընդունվել է 23.03.2015:

Հովհական պատճենը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ 2015

բանաստեղծի հոգու ճիշն է, Երկիր մոլորակում ապրող ժողովուրդներին, ազգ ու ցեղերին ուղղված նրա արդար պահանջն ու աղերսը, նրա ահեղամռունքը: Բանաստեղծը դատապարտում է քար աշխարհին, ում աչքի առաջ արնաշաղախ յաթաղանով ոչնչացվեց քաղաքակիրթ մի ժողովուրդի ստվար հատվածը:

Յուրաքանչյուր մարդ, որ ազգի էլ պատկանի, չի կարող առանց հուզվելու թերթի հայոց կոտորածների հավերժասուգին նվիրված այս դատաստանամսությանի էջերը՝ արյունոտված և արցունքաբար:

Համաշխարհային տիրապետության ծգոտոյ, Մեծ Թուրան ստեղծելու պանթուրքական ծրագրով տարված թուրքիան ամեն կերպ ջանում է աշխարհին ապացուցելու, թե Արևմտյան Հայաստանի տեղաբնիկ միլիոնավոր հայերին ինքը չի կոտորել, նրանց հայրենիքն ինքը չի խել: Այս ամենը կարող է հերթել միայն ուրիշի ունեցածք հակառակած թուրքը և իր բռնազավարումներն արդարացնել միմիայն իրեն բնորոշ ուրացումով:

Բանաստեղծ թուրքական, Կարիմում կիզված, Օլյիհում մորթված, Տարոնում ընկած, Քերաթում թերթված անմեղ հայերի Գողգոթան է պատկերված պոեմում:

Ստեղծագործության տարբեր գլուխներում ցնցող մանրամասներով բանաստեղծը ներկայացնում է թուրքերի կողմից հրագործված արևմտահայության ցեղասպանությունը: Սակայն, այս ամենով հանդերձ, բանաստեղծը չի կորցնում հավատն իր ժողովուրդի գալիքի հանդեպ.

–Ոչ ոք չի կարող մեր ծուխը կտրել...

Թոնիրը կա դեռ,

Եվ այս մաստյանի հարակայությամբ

Կապրի հոյսն անմեռ...[4]

«Հայոց դանթեականի» մասին առաջին խոսքն ասաց այն ժամանակ երիտասարդ գրականագետը Ղ. Գասպարյանը: Նա գրել է: «Ժողովուրդի պատմությունը որպես ճակատագրական պահ Շիրազի ստեղծագործության մեջ թեկվում է 1915թ. Մեծ Եղեռնի պատկերի մեջ: Եղեռնը նա հրավացիորեն համարում է հողագոնի «մերքերի մեղքը»: Չարենցի «Դանթեական առասպելից» հետո, որը ազգային կյանքի մղձավանջի ականատեսի դանթեականն էր, ծնվում էր Շիրազի «Հայոց դանթեականը» լայնաշունչ պոեմը, որն արդեն մեծ արհավիրքն ապրողի դանթեականն է»:[5]

Հ. Շիրազը Եղեռնի ընթիանուր պատկերի վրա նկարագրում է նաև ըմբռստ հայ այրերի և կանանց սիրանքը, որն անգամ թուրք ոհմակին է ապշեցնում:

Բանաստեղծը ցավով նշում է, որ «օրոցքի դեմ գորիի ելած զորքը» փորձում է մի ողջ ժողովուրդ մորթել իր բնօրդանում, ապա հնչեցնելով իր անհուն ատելությունը թուրք-գազանների դեմ բացականչում է: «Թե՞ մարդը սա է՝ ես զայլ կդառնամ»:

Մեծ պոետն ընդգծում է, որ արդի աշխարհում Եղեռնի ուրացումն ու մոռացումը նոր Եղեռններ կծնեն: Ուստի բանաստեղծը «Եղեռնասաստի վրեժարդոցվ» ահազանգում է մարդկությանը, որ չմոռանան հայոց վշտի մասին, և չշարունակն քար լռությամբ մեղսակցել թուրք մարդասպաններին.

«Ես ողբերգում եմ ապրողաց համար, հայ վերապրողաց, որ ցույցի ելնեն, հոգեհամգիստը գորան ընկողաց»:[6] Հովհ. Շիրազն անհամենատեղի է համարում հայոց վիշտը, նա չի կարողանում գտնել մի այնպիսի երկիր, ազգ, որի ապրած ցավի հետ համեմատելի լինի հայոց Եղեռնը: Նա վկայակոչում է վերածնության դարաշրջանի իտալացի մեծ բանաստեղծ Դանթեին, ում նկարագրած դժոխքի հետ նույնիսկ չենք կարող համեմատել հայոց ողբերգությունը:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Պոեմում Շիրազը կերտել է Հին ու Նոր Հայաստանի խորհրդանշական պատկերը: Ամեն ինչ արված էր հայության խսպար բնաջնջելու և նրա բնօրրանը վերջնականապես բռնագավթելու համար:

Ցեղասպանությունը համառորեն ուրացող Թուրքիան ցայսօր չի պատասխանում այն հարցին, թե ինչ եղան նախքան եղեռնը Օսմանյան կայսրության սահմաններում ապրած միջինավոր հայերը, որտե՞ղ են այսօր պատմական Հայաստանի Տարոն գավառն ու նրա Հացենքաց ու Խորոնք գյուղերը, ուր ծնվել են հայ գրերի հանձարեղ գյուտարար Մ. Մաշտոցն ու պատմահայր Մ. Խորենացին, ու՞ր է Վասպուրական աշխարհի իր Վանա ծովով, Աղքամարով...

Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի զգալի մասը բռնագավթել է Թուրքիան: Այս ամենը լկտիաբար իերօնում է թուրք հանցագործը, և շարունակում իր վայրենի, զագանային վարդը: Սա է Թուրքիայի հրական դեմքը՝ քողարկված ժողովրդավարության կեղծ կարգախոսներով:

Հ. Շիրազը մերկացնում է թուրք կառավարիչների լկտի քաղաքականությունը և հույս հայտնում, որ պատմական ճշմարտությունը երբնէ հաղթանակելու է, թուրքական ոճրագործությունն ու կեղծիքը նոյնիսկ դատապարտելու են ողջամիտ թուրքերը, սակայն Թուրքիան դեռևս ապավինում է իր գորեղ հովանավորներին, որոնք ճշմարտության փոխարեն առաջնորդվում են քաղաքական շահերով:

Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը, ողբամատյան և դատաստանագիրը լինելով հանուրծ, ավարտվում է լուսավոր լավատեսությամբ:

Սարդկության քնած խիղճը, այնուամենայնիվ, արթնանում է թեկուզ ուշացումով, ցեղասպանության ճանաչման գործընթացը նոր հուն է մտնում:

Այսոր արդեն որոշ տեղություններ պետականորեն ճամաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը:

Թուրք զամփոր բոլոր ժանիքները պիտի փշրվեն, երբ միավորվեն աշխարհի քաղի կամքի տեր մարդիկ և պատասխան պահանջեն ոճրագործից ու նրան կանգնեցնեն ահեղ դատաստանի առաջ: Հովհ. Շիրազն ասում է. «Այն աչքերը, որոնք ոչ մի կաթիլ արցունք չեն թափել այլոց ցավերը տեսնելու, այն քար ու ապակյա աչքերը չպիտի ընկնեն այս մի գործի ոչ մի էջի վրա, ես անհծում եմ նրանց, նոքա գետի գլխին լոդացող բագերին են նման»: [7]

Սարդկությանը զգոնության կոչ է անում մեծ քանաստեղծը: Նա դատապարտում է ոչ միայն եվրոպական տերությունների երկրիմի քաղաքականությունը, այլև համայն աշխարհի քար լռությունը. «Եթոք այլվում էր երկիրն իմ հայոց, այս քար աշխարհը մի ծայն չէր հանում»: Բազում ազգերի երջանիք քանաստեղծներին է դիմում և պահանջում, որ աստղագի դառաջ՝ իջնեն և տեսնեն հայոց քանաստեղծների տառապանքներն ու ապրումները և ականատես լինեն, թե ինչպես է թուրքը մորթում հայ միտքը: Բայց այստեղ էլ Մեծն Շիրազը հուսախար եղավ.

Ինչպես է, որ դու՝ բանաստեղծդ մեծ,

Լռում ես, դու՝, որ նժարն ես վշտի: [8]

Նոյմիսկ քանաստեղծների գրիչներն են լրել, սառել են նրանց քանաքերը, իսկ հայ քանաստեղծները ստեղծագործական երկունքի պահին մորթվեցին. իիշենք Զոհրապին, Վարուժանին, Սիամանթոյին, Մեծն Կոմիտասին: Եվ ինչպես կարող է մի ազգ, ով այսքան կորուստներ է ունեցել, տարածքներ է կորցրել, մոռանա ու հաշտվի իրականության հետ, իրականություն, որը մոռանալը կնշանակի մոռանալ իր ես-ը, իր ինքնությունը, բայց չէ որ մենք հայ ենք և զնորունակ չենք մեր ես-ը խառնելու ուրիշներին: Հայաստանը մանուշակի հետ է համեմատում, որն ամեն մի պատմահական քա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅՑ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

մուց օրորվում է, և որին սատարող ծեռք է հարկավոր տրորելու փոխարեն: Տեսնելով, որ ոչ ոք չի լսում իրեն, հարմարվում է մենակությանը, խնդրում, որ գոնե զան լացով կիսելու «հայոց անկիսելիները», նույնիսկ դրանից էլ են հրաժարվում. «Ավաղ, մարդը լոկ իր ցավն է զգում, լոկ իր ցավով է ցավում ամեն ցեղ»: [9]

Հովհ. Շիրազը «Հայոց դանթեականը» պետմը գրել է սրտի արյունով, հոգու անամոք մորմոքով, յուրաքանչյուր նյարդով՝ զգալով 1915-ի աննախադեպ ոճիրի սարսափը:

Նա վերստին քննադատում է մեծ տերություններին՝ ամստարբեր պահպածքի պատճառով և դաշնացած գրում. «Ել ի՞նչ մեծություն, որ փոքրերին առավել եք փոքրացնում»:

Վշտակոծ պետող դիմում է աշխարհի խղճին, սակայն աշխարհի խղճը նոյնակես քուն էր մտել: Վկայակոչելով միջազգային արժեքներ կերտող գիտության և մշակույթի մեծերին՝ «Հիսուսի վեղարներ հազար անհիսուս ազգերին» դատապարտում է վերստին և փաստում, որ «ամեն պղծանք ծնվում է շահից»: «Հայոց մեծ ըղձասացը» (Ս. Աղաբարյան) դառնում է Հայոց Մեծ եղեռնի մեծ ողբասաց:

Բանաստեղծի երազանքը Մասիսներն ազատված տեսնելն է, որն այդպես էլ իրականություն չդարձավ, և մեծ հայրենասերը լյանքից հեռացավ այդ մեծ ցավը սրտում: Սակայն, նա հավատում է, որ կզա մի օր, որ կազատվեն գերի Մասիսներն ու ողջ Արևմտյան Հայաստանը:

Ծեշտեմք վերստին, որ այսուամենայմիկ, հանձարեղ գեղագետող մնում է աննահանջ լավատեն՝ սերունդներին ավանդելով, որ կորուսյալ հայրենիքի ազատագրուման ավետիսը շշուկով հայտնեն իրեն, որպեսզի ուրախությունից սիրտոր չպայթի գերեզմանում: Հայրենիքի ողբերգությունը նրա անձնական ողբերգությունն է, նրա երակներում հոսում է վշտի արյունը և բարերն ասես արյունամաժ են... Բանաստեղծը հաճախ է իր ծննդյան թվականը համարում 1915-ը, ինչ ծննդյան օրը՝ ապրիլի 24-ը: Շիրազն իրեն համարում էր եղեռնազարկ ժողովրդի՝ 1915թ. ապրիլի 24-ի ողբերգությունից ծնված բանաստեղծ:

< Շիրազի «Հայոց դանթեականը» փաստավավերագրական և գեղարվեստական հզոր կոթող է: Այն այսօրվա մեր սերնդի սեղանի գիրքը պիտի լինի: Նա պետք է կարդա, իմանա, բռնակառվի մեր պապերի վրեժով և լինի պահանջատեր: Արդար հասուցման, ցեղասպան եղուզակին պատժելու կոչով է ավարտվում պետմը. ծովից ծով Հայաստանի փոխարեն < Շիրազը պահանջում է ընդամենը.

- Ձեզ լինի, ազգեր, ծովից ծովն իմ հին, ազգեր չարաղես,

Միայն թե թողեք համբուրզի Սևանն իր Կան քրոջ հետ: [10]

Բանաստեղծը դարավոր մեր թշնամու տիպիկ դիմագիծը ևս կերտել է վարպետ գրչով:

Թուրքը հայի հայրենիքը ստով ու կեղծիքով իրենն է համարում՝ հայոց Մասիսը վերամկանելով Աղրի Դադ, Տիգրանակերուր՝ Դիարբեքիր և այլն:

Դիմելով աշխարհի մարդկանց, մեծ տերություններին՝ նա կոչ է անում «քացել խղճի դրաները և արդար դատավոր լինել»: Յոթ հարյուր հազար խոշտանգված մտավորականների սուզն է հեծեծում: Պոեմում դատապարտվում է աշխարհի հզոր տերությունների հանցավոր լռությունն ու շահադիտական քաղաքականությունը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՇՏՈՑ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱԾՈՒ 2015

Մարտահրավեր է նետում Հ. Շիրազն Աստծուն, որ «չբռնեց ոճրագործի արյունոտ թաթը»: Նա, ներկայացնելով 1915-ի գեհենը պարունակ առ պարունակ, այն իրավացիորեն համարում է հողագնդի «մեղքերի մեղքը»:

Ականեմիկոս Ս. Մարինյանը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության այրող հարցին, նշում է. «Հայոց ցեղասպանությունը թուրքիայում ապացույցի ենթակա հարց չէ: Այն միանգամայն հավաստի իրողություն է դարավոր բռնությունների, հակշտակած պատմական Հայաստանի բնաշխարհից օտարպատ ազգային զանգվածների, միջնավոր զոհվածների անհերքելի վկայությամբ: Բայց որպես պատմական եղելություն, դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա գիտական հմացությունն ուսանելի է ոչ միայն իրավական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակրթության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մարառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, սադիզմի հոգեբանության ճանաչման առումով: Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագիրը շարունակվում է գործել այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով: Այս իմաստով հայոց ցեղասպանության խնդիրը պետք է բնել ներկա իրադարձությունների դիտակենտից, իդերի տրամաբանության մեջ հայտնաբերելու պատմության վերձեմ»: [1]

Ցեղասպանության այրող ցավը աշխարհում կինչի այնքան ժամանակ, մինչև քաղաքակիրք ազգերը գիտակցեն այն դատապարտելու անհրաժեշտությունը: Այս առումով Հովհաննի Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը արդարացի մի կոչ է՝ ուղղված առաջին մարդկությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շիրազ Հ., «Հայոց դանթեականը», Եր., 1991, էջ 5:
2. Շիրազ Հ., «Հայոց դանթեականը», Պեյրութ, 1965, էջ 3:
3. Նույն տեղում, էջ 3:
4. Շիրազ Հ., «Հայոց դանթեականը», 1991, էջ 98:
5. Գասպարյան Դ., «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը», Եր., 1990, էջ 301:
6. Շիրազ Հ. «Հայոց Դանթեականը», 1991, էջ 5:
7. Նույն տեղում, էջ 128:
8. Նույն տեղում, էջ 117:
9. Նույն տեղում, էջ 226:
10. Նույն տեղում, էջ 332:
11. Մարինյան Ս., «Հայոց գրականության երկու դարը», գիրք 4, Եր., 2004, էջ 330

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ցեղասպանությունը Հովհաննի Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմում
Անի Խաչատրյան

Հոդվածում արտացոլված են 1915թ. հայոց ցեղասպանության դեպքերը, որոնք իրենց ցավուտ արձագանքն են գտել Հովհաննի Շիրազի «Հայոց Դանթեականում»: Պոեմը մինչև այսօր չի ենթարկվել գրականագիտական լուրջ ուսումնասիրության: Այն պատմագեղարվեստական հուշարձան է՝ նվիրված 1915թ. ցեղասպանությանը զոհ դարձած արևմտահայերի հավերժասուգին: Այստեղ մեծ բանաստեղծը «Եղեռնասաստի վրեժարոցով» ահազանգում է աշխարհին, որ չմոռանա հայոց վշտի մասին, որ դատավոր

լինի այս ողբերգության և չշարունակի քար լռությամբ մեղսակցել թուրք մարդասպան-ներին: Ամբողջ մեկ հատոր կազմող պոեմում հայոց արդար դատի պահանջն է հնչեցնում:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, ցեղասպանություն, Հայոց դանթեական, ողբասաց, եղեռնազարկ, մեղքերի մեղք, Հովհ. Շիրազ, խղճի դուռ:

РЕЗЮМЕ

Геноцид в поэме Ов. Шираза «Айоц Дантеакан»

Ани Хачатрян

В статье отражены события геноцида армян 1915, оставившие свой болезненный след в произведении Ованеса Шираза “Айоц Дантеакан”. До сегодняшнего дня поэма не была серьезно изучена. Это художественно-исторический памятник вечному трауру по жертвам геноцида в Западной Армении. Здесь великий поэт “пламенем мести за геноцид” предупреждает мир не забывать о горе армян, осудить эту трагедию и не пособничать турецким убийцам глухим молчанием. В поэме, составляющей объемом целый том, автор озвучивает требование армян о справедливом суде.

Ключевые слова: Западная Армения, геноцид, «Айоц Дантеакан», горестный вопль, удар геноцида, грех грехов, Ов. Шираз, ворота совести.

SUMMARY

The Genocide in the poem «Hayots Dantseakan» by Hovh. Shiraz

Ani Khachatryan

The article dwells upon the events of genocide of Armenians in 1915 which left the painful trace in the work "Hayots Dantseakan" by Hovhanness Shiraz. The poem wasn't seriously studied up to the day. It is an artistic and historical monument to the eternal mourning for the victims of genocide in the Western Armenia. Here the great poet by the "revenge flame for genocide" warns the world not to forget about a grief of the Armenians, to condemn this tragedy and not to assist the Turkish murderers with deaf silence. In the poem, which takes a whole volume, the author sounds the requirement of Armenians for a fair trial.

Keywords: Western Armenia, genocide, "Hayots Dantseakan" scream of sorrow, the hit of genocide, the sin of all sins, Hovh. Shiraz, gates of conscious.